ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2024 թվականի № 439-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի № 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի և 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի № Ե-3104, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Զովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի № 38 գրությունները և Զովունի բնակավայրի բնակիչ Արթուր Արամայիսի Հայրապետյանի 2024 թվականի օգոստոսի 28-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 11-ի *««Զովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը և վերակազմավորման կարգը հաստատելու մասին»* № 104-Ա որոշմամբ հաստատված կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) կանոնադրության տիտղոսաթերթում և կանոնադրության ընդհանուր դրույթներ բաժնում *«ԶՈՎՈՒՆՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»* բառերը փոխարինել *«ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԶՈՎՈՒՆՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»* բառերով:

2. Հաստատել «Արամայիս Հայրապետյանի անվան Զովունու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

3. Հանձնարարել կազմակերպության տնօրենին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության

իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կանոնադրության մեջ կատարած փոփոխությունը գրանցելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի նոյեմբերի 7
ք. Հրազդան